ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԵՎ ՆԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՎՍՏՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գործուղված անձինք՝ Մարիամ Գալստյան, Նանե Հարությունյան

Գործուղվող անձի զբաղեցրած պաշտոնները՝ ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման բաժնի պետ, ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման բաժնի գլխավոր մասնագետ

Գործուղման վայրը և ժամկետները՝ սեպտեմբերի 2-8, Ավստրիա, Վիեննա

Հրավիրող կողմը՝ ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակ

Գործուղման նպատակը՝ մասնակցություն Միավորված ազգերի կազմակերպության «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) կիրառման վերանայման մեխանիզմին մասնակցող ազգային փորձագետների և ազգային պատասխանատուների համար լրացուցիչ դասընթացին, Կոնվենցիայի կիրառման վերանայման խմբի 9-րդ նստաշրջանին:

Քննարկված թեմաները

Կոնվենցիայի կիրառման վերանայման խմբի 9-րդ նստաշրջանին քննարկված թեմաներն են՝

1. Կոնվենցիայի կիրառման վերանայման գործընթացը, այդ թվում՝ անդամ երկրների գրանցած հաջողությունները և մարտահրավերները,
2. Կոնվենցիայի կիրառման վերանայման մեխանիզմի (IRM) կատարման հաշվետվությունը,
3. Կոնվենցիայի կիրառման գործընթացում տեխնիկական աջակցությունը,
4. Ֆինանսական և բյուջետային հարցեր՝ կապված Կոնվենցիայի կիրառման հետ,

5. Կոնվենցիային 2018 թվականի ընթացքում միացած երկրներին վերանայող անդամ պետությունների ընտրություն,

Կոնվենցիայի կիրառման վերանայման մեխանիզմին մասնակցող ազգային փորձագետների և ազգային պատասխանատուների համար դասընթացին քննարկված թեմաներն են՝

1. Կոնվենցիայի կիրառման վերանայման գործընթացը, դրա իրականացման մեխանիզմը, փուլերը,
2. Վերանայվող երկրների կողմից Կոնվենցիայի կիրառման վերանայման հարցաշարի լրացման, հանձնման առաձնահատկությունները,
3. Վերանայող երկրների կողմից տրամադրված տեղեկատվության գնահատման, զեկույցների կազմման, հրապարակման առանձնահատկությունները,
4. Կոնվենցիայի կիրառման վերանայման գործընթացի այլ առանձնահատկություններ:
5. Դասընթացի ընթացքում կազմակերպվել է փորձնական վերանայման գործընթաց՝ մասնակիցներին պրակտիկ հնարքներ սովորեցնելու նպատակով:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Կոնվենցիայի կիրառման վերանայման խմբի 9-րդ նստաշրջանի ընթացքում Հայաստանի պատվիրակությունը հանդես է եկել ելույթով՝ ներկայացնելով Հայաստանի կողմից Կոնվենցիայի իրականացմանն ուղղված քայլերը, այդ թվում՝ ընդգծել կոռուպցիայի նկատմամբ բացարձակ անհանդուրժողականությունն ու դրա վերացմանն ուղղված քաղաքական ամուր կամքը, անդրադարձել Հայաստանի գնահատման ու Հայաստանի կողմից իրականացվող վերանայման գործընթացներին: Հայաստանի ներկայացուցիչը հայտնել է նաև, որ Հայաստանն արդեն իսկ լրացրել է համապատասխան գնահատման հարցաշարը և գտնվում է դրա ամփոփման փուլում: Նստաշրջանի ղեկավարությունը հատուկ շնորհակալություն է հայտնել Հայաստանի կողմից հաստատված ժամանակացույցին հետևելու և արդյունավետ համագործակցության համար:

«Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի կիրառման վերանայման մեխանիզմին մասնակցող ազգային փորձագետների և ազգային պատասխանատուների համար դասընթացի ընթացքում կազմակերպված փորձնական գնահատման թիմային աշխատանքում Հայաստանի ներկայացուցիչն ընտրվել է որպես թիմի ղեկավար, կազմակերպել է փորձնական գնահատման գործընթացը և ներկայացրել թիմի իրականացրած աշխատանքները:

Հարկ է նկատել, որ սեպտեմբերի 5-ից 7-ն ընթանում էր նաև «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի կանխարգելման խմբի 9-րդ նստաշրջանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ

նստաշրջանին մասնակցում էին անդամ գրեթե բոլոր երկրների ներկայացուցիչներ և քննարկվում էին կանխարգելման բնագավառին առնչվող հույժ կարևոր հարցեր՝ Հայաստանի ներկայացուցիչները զուգահեռաբար մասնակցել են նաև նշյալ նստաշրջանին: Նստաշրջանում քննարկվել են շահերի բախման, հայտարարագրերի լրացման, նվերների հաշվառմանն առնչվող հարցեր:

Հայաստանի պատվիրակությունը մասնակցել է նաև ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի իրականացման վերանայման մեխանիզմի շրջանակներում հասարակական կազմակերպությունների համար կազմակերպված քննարկմանը: Թեև քննարկմանը Հայաստանից հասարակական կազմակերպություններ չէին ներկայացնում, այնուամենայնիվ, ներկա էին խոշոր հակակոռուպցիոն կազմակերպությունների ներկայացուցիչներ: Բարձրացվեցին գույքի, եկամուտների հայտարարագրման, ակտիվների վերականգնման, իրական սեփականատերերի բացահայտման վերաբերյալ հարցեր:

Հայաստանի մասնակցության արդյունքները

Հայաստանը ներկայումս գտնվում է Կոնվենցիայի իրականացման վերանայման գործընթացում: Հայաստանը տվյալ տարում Մեծ Բրիտանիայի հետ վերանայում է նաև Իսլանդիայի կողմից Կոնվենցիայի իրականացումը: Միաժամանակ, դեռևս 2016 թվականից՝ Կոնվենցիայի իրականացման վերանայման 2-րդ փուլի 1-ին տարուց, ընտրվել է Իրանին գնահատող երկիր և վերջինիս կողմից հարցաշարը հանձնելու պահից պետք է նաև իրականացնի Իրանի գնահատումը: Ուստի, Հայաստանի պատվիրակության ներկայացուցիչները առանձին հանդիպումներ են ունեցել Կոնվենցիայի քարտուղարության՝ վերոնշյալ գնահատումների համակարգումն իրականացվող պաշտոնյաների հետ: Համաձայնություններ են ձեռք բերվել մյուս գնահատող երկրների հետ առաջիկա օրերին տեսակոնֆերանսներ իրականացնելու, հետագա աշխատանքը բաշխելու վերաբերյալ: Նշված տեսակոնֆերանսների ընթացքում քննարկվելու են Հայաստանի գնահատման հետ կապված մանրամասներ, այդ թվում՝ գնահատման լեզվի, գնահատող խմբի այցի կազմակերպման վերաբերյալ հարցերը:

Հայաստանի պատվիրակության անդամ փորձագետները մանրամասն տեղեկատվություն ձեռք բերեցին գնահատման գործընթացի վերաբերյալ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանը մասնակցում է 3 վերանայման գործընթացների՝ փորձագետների ձեռք բերած հմտությունները, տեղեկատվությունը և կապերը անհրաժեշտ են գործընթացների արդյունավետ կազմակերպման համար:

Մասնակցության արդյունքում ներկայացվող առաջարկությունները

1. Իրականացնել հետագա քայլեր՝ ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի արդյունավետ իրականացման համար, այդ թվում՝ շարունակել համագործակցությունը ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի շրջանակներում գործող մարմինների հետ,
2. Շարունակել Կոնվենցիայի կիրառման վերանայման շրջանակում Հայաստանի կողմից հարցաշարի լրացման աշխատանքները՝ բոլոր շահագրգիռ մարմինների մասնակցությամբ,
3. Համախմբել Կոնվենցիայի կիրառման վերանայման մեխանիզմի անդամ փորձագետների աշխատանքը՝ առաջիկայում Իրանի և Իսլանդիայի գնահատման գործընթացներում բոլոր փորձագետների մասնակցությունը ապահովելու նպատակով,
4. Պատրաստվել Հայաստանի գնահատման շրջանակներում նախատեսված գնահատող փորձագետների այցին,
5. Քննարկել Կոնվենցիայի կիրառման գործընթացում անհրաժեշտ տեխնիկական աջակցության հարցը:

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԵՎ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ